https://doi.org/10.46991/S&L/2022.94.006

ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ՝ ՈՐՊԵՍ ՏԵՍԱԿԱՆԻ ԵՎ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ՝ ՈՐՊԵՍ ՓՈՐՁՆԱԿԱՆԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ

Հասմիկ Լեյլոյան
ԵՊՀ պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի ասպիրանտ,
«ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ Տեղանքի տեղակայման պայմանագրերի կառավարման մասնագետ

«Հնարավորություն» և «իրականություն» հասկացությունները թեև փիլիսոփայական կատեգորիաներ են սակայն հաճախակի են կիրառվում իրավունքի մասին իմացաբանական և մեթոդաբանական ուսումնասիրություններում: Դրանք, լինելով իրերի և երևույթների իմացաբանական մեթոդներ, իրենց վերաիմաստավորումն են գտնում հայտնի գիտություններում և գիտակարգերում: Իրավագիտությունը, մասնավորապես իրավունքի փիլիսոփայությունը, որն իրավունքի ճանաչման բարձրագույն ձևն է, ևս բացառություն չէ:

«Հնարավորություն» և «իրականություն» կատեգորիաների միջոցով մենք հնարավորություն ենք ստանում ներթափանցելու իրավունքի էության մեջ, դիտարկելու իրավունքը շարժման մեջ, վեր հանելու իրավական երևույթների և իրողությունների զարգացման օրինաչափությունները և ըստ այդմ՝ նախագծելու իրավակարգավորման արդյունավետ կառուցակարգերի ներդրման կամ իրավունքի և օրենքի կենսագործման արդյունավետության բարձրացման ուղիներ:

Վերոգրյալի շրջանակներում կարևորում ենք քննարկվող հասկացությունների փոխհարաբերության առումներն իրավունքի համատեքստում վերլուծելու անհրաժեշտությունը: Սակայն, նախ, հարկ ենք համարում անդրադառնալ «հնարավորություն» և «իրականություն» հասկացությունների էությանը: Վերջիններիս բնորոշման առաջին փորձերը կարող ենք տեսնել Արիստոտելի (մ. թ. ա. 384 - մ. թ. ա. 322) մոտ, ով, իր «Մետաֆիզիկա» աշխատության մեջ տարանջատելով այս երկու հասկացությունները, իրականությունը նույնացնում է կեցության (գոյության) հետ, որն իր նյութական (մատերիական) արտահայտությունը և ձևն է ստացել իրականության մեջ: «Իրականություն» հասկացությունը Արիստոտելը բնորոշում է «հնարավորություն» հասկացությանը հակադրելու եղանակով և ի պատասխան այն հարցին, թե ի՞նչ է իրականությունը, Արիստոտելը գրում է. «Հակառակն է այն ամենին, ինչ գոյություն ունի այլ կերպ, քան հնարավորությունը»[1]: Վերլուծելով Արիստոտելի մոտեցումը՝ կարող ենք արձանագրել, որ հնարավորության լինելիությունն ինքնին իր բովանդակության մեջ կրում է կեցության և գոյության բոլոր այն տարրերը, որոնք դեռևս իրականության մեջ իրենց նյութական (մատերիական) դրսևորումը և ձևը չեն գտել: Հետևաբար, իրականությունը, փոխկապակցված լինելով հնարավորության հետ, փաստացի բխում է վերջինից, որտեղ կեցության իրականացումը հակադրվում է «կեցությանը հնարավորության մեջ»[2] գաղափարին: Այլ կերպ ասած՝ իրականության վերածման համար անհրաժեշտ է ունենալ հնարավություն, որը, ըստ Ա-

[1] Տե՛ս **Книгин А.Н.**, Учение о категориях. Томск: Изд-во Том. унт-та, 2002, էջ 123:
[2] Տե՛ս **Аристотель**, Метафизика. Переводы. Комментарии. Толкования. Сост. и подготовка текста С. И. Еремеев. СПб.: Киев: Эльга, 2002, էջ 288-289:

րիստոտելի, նախ՝ վերածման համար անհրաժեշտ կարողությունն է: Բայց և այնպես չիրականացված կեցությունը հնարավորության մեջ նույնքան իրական է, որքան իրականացված կեցությունը:[1] Այս միտքը փաստում է հնարավորության օբյեկտիվ և անկախ գոյություն ունենալու հատկությունը:

Վերոգրյալի համատեքստում իրականության և հնարավորության փոխհարաբերության տեսանկյունից ակամա հարց է ծագում. արդյո՞ք այն ամենը, ինչ գոյություն ունի, բխում է հնարավորությունից, կամ արդյո՞ք «կեցությունը հնարավորության մեջ» միշտ նախորդում է «կեցությանը որպես իրականություն»: Խնդիրը հետևյալն է, որպեսզի հնարավորությունը նախորդի իրականությանը (գոյությանը կամ կեցությանը), նախ, այն պետք է ունենա իր սեփական կեցությունը: Մեր կարծիքով՝ հնարավորության դիտարկումը՝ որպես կեցությանը նախորդող և վերջինիս «մաքուր» հնարավորությունը հանդիսացող երևույթ, սխալ է, քանի որ մենք գործ ունենք դիալեկտիկական կատեգորիաների և անվերջ իրար հաջորդող իրականությունների հետ, որոնք համապատասխան հնարավորության առկայության պարագայում վերածվում են այլ իրականությունների: Հետևաբար, առաջնայնություն տալ դիտարկվող կատեգորիաներից որևէ մեկին, նպատակահարմար չէ: Ի հակադրություն մեր մոտեցմանը՝ Արիստոտելը գտնում էր, որ քանի որ շարունակ գոյություն ունի իրականություն, որը նախորդում է առկա հնարավորությանը, իրականությունն օժտվում է հավերժական բնույթով, իսկ «հավերժական իրերն առաջնային են փոփոխականներից»[2]: Տեսաբան Ա. Ն. Կնիգինի կարծիքով՝ հնարավորությունն Արիստոտելի համար իրականության մի դրվագ է, ինչը վկայում է, որ քննարկվող հասկացություններն Արիստոտելը չի դիտարկում երկու առանձին տրամաբանական կատեգորիաներ, այլ վերջիններս հանդես են գալիս նույն կատեգորիան արտահայտելու երկու տարբեր հասկացություններ[3]:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ «հնարավորություն» և «իրականություն» հասկացությունները չեն կարող դիտարկվել իրարից անկախ: Իրականությունը հանդես է գալիս որպես ձև, որին գալիս է լրացնելու հնարավորությունը՝ որպես նյութ (մատերիա):

Հակառակ մոտեցմամբ են հանդես եկել Ի. Կանտը (1724-1804 թթ.) և է. Հուսերլը (1859-1938 թթ.)[4]: Քննարկվող կատեգորիաները Կանտը բացահայտում է էմպիրիկ մտածողության կանխադրույթների [5] միջոցով: Այս մոտեցումը միտված է քննարկվող կատեգորիաներին այնպիսի պահանջներ առաջադրելուն, որոնց միջոցով մտածողությունը կորոշի իրերի իրական, հնարավոր և անհրաժեշտ գոյությունը: Ըստ այդմ «հնարավորություն» և «իրականություն» հասկացությունները Կանտը համարում է իրերի հատկություններ՝ իրարից անջատ, շրջանցելով դրանց փոխհարաբերությունը: Մեր կարծիքով, նմանօրինակ մոտեցումները, որտեղ «հնարավորություն» և «իրականություն» հասկացությունները դիտարկվում են միմյանցից անջատ, չեն կարող նպաստել տվյալ հասկացությունների էության, բովանդակության խորքային բացահայտմանը և ապահովել դրանց վերլուծության տեսանելի առաջընթաց:

Այլ մոտեցմամբ է հանդես եկել Գ. Վ. Ֆ. Հեգելը (1770 -1831 թթ.). նա դիալեկտիկայի դիրքերց ընդգծում է հնարավորության և իրականության տրամաբանական անխախտելի փոխկապակցվածությունը: Հեգելը գրում է. «Հնարավորությունն ինք-

---

[1] Տե՛ս նույն տեղը, էջ 283:

[2] **Аристотель**, նշված աշխատությունը, 2002, էջ 295:

[3] Տե՛ս **Книгин А.Н.**, նշված աշխատությունը, էջ 124:

[4] Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս **Гуссерль Э.**, Идеи к чистой феноменологии и феноменологической философии. Книга 1. Общее введение в чистую феноменологию. - М., 1999:

[5] Տե՛ս **Кант И.**, Критика чистого разума. Сочинения в шести томах, т.3. – М., 1964, 280:

նին անկատար է, մատնանշում է ինչ-որ բան, այն է՝ իրականությանը լրացնում է իրեն վերջինում»[1]: Մեջբերված միտքը նշանակում է, որ միմյանցից մեկուսի քննարկվող հասկացությունները դառնում են անբովանդակ: Մեր կարծիքով, թերևս Հեգելի մոտեցումն այն է, որ զարգացնելով արիստոտելյան գաղափարները՝ ճշմարիտ դիրքերից բնորոշվի տվյալ կատեգորիաների փոխարաբերությունը:

Հեգելը «իրականություն» կատեգորիան դիտարկում է առնվազն երեք առումներով. նախ՝ ներքինի և արտաքինի, էության և երևույթի անմիջական միասնություն, երկրորդ՝ իրականությունն իր իսկ հնարավորությունների հետ հակադրման միջոց և երրորդ՝ իրականությունը հնարավորության հետ փոխհարաբերության մեջ: Վերջինում իրականությունը և հնարավորությունը վերաիմաստավորվում են «անհրաժեշտություն» և «պատահականություն» հասկացություններով[2]: Իրավունքի համատեքստում Հեգելի մոտեցումների ազդեցությունը և զարգացումը տեսանելի են արդի հեղինակների երկերում, որոնց տեսակետները կքննարկենք հաջորդիվ:

Վերոգրյալի շրջանակներում, միաժամանակ, կարևոր ենք համարում ընդգծել, որ հնարավորությունը, լինելով իրականության հետ դիալեկտիկական փոխկապակցվածության մեջ, միշտ հանդես է գալիս որպես տեսական, իսկ իրականությունը՝ որպես հնարավորության մարմնավորումը փորձում՝ փորձնական: Օրինակ, ըստ Դ.Ա. Կերիմովի՝ տեսականը բնորոշելիս այն պետք է դիտարկել հնարավորություն, նախապայման կամ միջոց ամբողջացման համար, իսկ ամբողջացումը տեղի է ունենում իրականացման շնորհիվ[3]: Վ.Մ. Սիրիխը, անդրադառնալով տեսական և փորձնական մակարդակներում իրավական գիտելիքներին, գտնում է, որ տեսականը և փորձնականը, չնայած միմիյանց նկատմաբ բովանդակային տարբերություններին, սերտորեն և ամուր փոխկապակցված են[4]: Տեսական մակարդակի գիտելիքները, չունենալով փորձնական մարմնավորում, ունակ չեն ապացուցելու իրենց հավաստիությունը կամ ճշմարտությունը[5]: Այսպիսին կլինի, օրինակ՝ Հայաստանի Հանրապետության հռչակումը որպես սահմանադրական միապետություն: Մի կողմ դնելով մեր օրինակում արտացոլված փոփոխության հավանականությունը՝ մենք գործ ունենք տեսականորեն հնարավոր իրադարձության հետ: Այն պահից սկսած, երբ տվյալ հնարավոր իրադարձությունն իր մարմնավորումը կստանա փորձում, մենք գործ կունենանք իրականության հետ:

Այժմ, երբ պարզեցինք «հնարավորություն» և «իրականություն» կատեգորիաների բովանդակությունը, հարկ են համարում անցնել «իրավական հնարավորություն» և «իրավական իրականություն» հասկացությունների վերլուծությանը:

Ն. Ի. Մատուզովի համոզմամբ, իրավական հարթությունում ընդհանուր առմամբ զերիշխում են իրավաբանորեն ամրագրված հնարավորությունները և ոչ իրողությունները, իսկ իրավունքի իրացման ողջ գործընթացը մարդկանց կամային գործունեության միջոցով իրավունքում ամրագրված հնարավորությունների կենսագործումն է[6]: Համանման մոտեցում է ցուցաբերում նաև Օ.Է. Լեյստը, ով իրավունքի դիսպոզիտիվությունը բնութագրելիս իրավունքը նույնացնում է հնարավորության հետ[7]: Մեր կարծիքով, նմանօրինակ մոտեցումներն իրավունքի նեղ ընկալում են և

---

[1] Տե՛ս **Гегель Г.**, Наука логики. Сочинения, т.V. – М., 1937, էջ 660:
[2] Տե՛ս **Гегель Г.**, Наука логики. В 3 т. Т. 2. М.: Мысль, 1971, էջ 286:
[3] Տե՛ս **Керимов Д. А.**, Методология права (предмет, функции, проблемы философии права). 2-е изд. — М., Изд. Аванта+, 2001, էջ 310:
[4] Տե՛ս **Сырых В. М.**, История и методология юридической науки: учебник - М.: Норма: ИНФРА-М, 2012, էջ 66:
[5] Տե՛ս նույն տեղում:
[6] Տե՛ս **Матузов Н. И.**, Возможность и действительность в правовой сфере // Правоведение. – 2000. – № 3, էջ 19:
[7] Տե՛ս Теория государства и права: Курс лекций - Под ред. М. Н. **Марченко. М.**, 1996, էջ 377:

միանշանակ չեն կարող ընդունվել, քանի որ իրավական հարթությունը միայն սուբյեկտիվ իրավունքներով չի սահմանափակվում: Ինչպես դիպուկ նկատում են Վ.Մ. Բարանովը, Վ.Բ. Պերշինը և Ի.Վ. Պերշինան, իրավական իրականության նկատմամբ իրավական հնարավորությունների առաջնահերթության հարցը կարիք ունի հստակեցման օբյեկտիվ և սուբյեկտիվ իրավունքի տեսանկյունից[1]: Օբյեկտիվ իրավունքի պարագայում թե՛ հանրային և թե՛ մասնավոր իրավունքն առաջանում է որոշակի իրավական հնարավորությունների առկայության դեպքում: Այստեղ իրավական հնարավորությունները՝ որպես իրավունքի առաջացման նախապայմաններ, ստանում են փիլիսոփայական իմաստավորում և չեն կարող նույնացվել ինքնին իրավունքի հետ: Ինչ վերաբերում է սուբյեկտիվ իրավունքին, ապա վերջինս իրավական հնարավորություն է՝ տրված իրավասուբյեկտիվությամբ օժտված սուբյեկտին: Հետևաբար, իրավական հնարավորության և իրավական իրականության վերլուծության շրջանակներում շատ կարևոր է հաշվի առնել, թե որ իրավական երևույթների տեսանկյունից ենք մոտենում դիտարկվող կատեգորիաների բացահայտմանը:

Այս կապակցությամբ մենք համաձայն ենք Լ.Ս. Յավիչի հետ, ով գտնում է, որ «հնարավորություն» և «իրականություն» հասկացությունների փոխհարաբերությունն իրավունքի համատեքստում կարելի է դիտարկել տարբեր առումներով: Առաջինը իրավունքի դիտարկումն է հասարակական զարգացման ողջ ընթացքի համայնապատկերում: Այստեղ իրավունքն իրականության մասնիկ է՝ տվյալ ժամանակաշրջանի իրավունքի պատմական տիպ, որի գոյությունը միանգամայն իրական է: Երկրորդ առումը հասարակական հարաբերությունները կարգավորող իրավական կառուցակարգն է, որի միջոցով օրենքը կամ իրավական ակտը կիրառվում է պատշաճ վարքագծի նկատմամբ: Այս տեսանկյունից իրավունքը բացառապես հնարավորություն է և միայն անհրաժեշտ (կամ հնարավոր թույլատրելի) վարքագծի դրսևորմամբ է այն հնարավորությունից վերածվում իրականության: Երրորդ, Լ.Ս. Յավիչը գտնում է, որ հնարավորության և իրականության փոխհարաբերությունն իրավունքում պետք է ուսումնասիրել ինքնին իրավունքի տեսանկյունից: Տվյալ պարագայում պարզ կդառնա, որ իրավական համակարգում նախատեսված հնարավորությունները դեռևս իրավունք չեն, քանի որ իրավունք լինելու համար անհրաժեշտ է օբյեկտիվ և սուբյեկտիվ իրավունքի միասնություն, իսկ վերջինիս դեպքում մենք գործ ունենք իրավական իրականության հետ: Հետևաբար, Լ.Ս. Յավիչը եզրակացնում է, որ ինքնին իրավունքը հնարավորությունից իրականություն վերածվելու գործընթացում է[2]:

Առանձին առումով է դիտարկում իրականությունն իրավունքում նաև Դ.Ա. Կերիմովը: Վերջինս գտնում է, որ իրավունքը՝ որպես հասարակության մեջ գործող որոշակի իրավական նորմերի համակարգ, օբյեկտիվ իրականություն է, սակայն ոչ բոլոր իրական գոյություն ունեցողներն են կենսագործվում[3]: Հետևաբար, անհրաժեշտ է տարբերակել գոյություն ունեցող իրավական նորմերը իրենց գործողությունից: Նշված հանգամանքը հաշվի առնելով՝ Կերիմովը իրականությունն իրավունքում հասկանում է միայն այն իրավական նորմերի իրականություն, որոնք, արտացոլելով հասարակական կյանքի պահանջմունքները, կենսագործվում են և արդյունավետ կարգավորում հասարակական համապատասխան հարաբերությունները:

---

[1] Տե՛ս **Баранов В. М., Першин В. Б., Першина И. В.**, О соотношении действительности и возможности в праве. Проблеми философии права. - Том II. Нижегородская академия МВД РФ. 2004, էջ 182:

[2] Տե՛ս **Явич Л.С.**, Необходимость и случайность, возможность и действительность в праве. Методологические проблемы советской юридической науки. М.: Наука, 1980, էջ 82:

[3] Տե՛ս **Керимов Д. А.**, Методология права (предмет, функции, проблемы философии права). 2-е изд. — М., Изд. Аванта+, 2001, էջ 277:

Տվյալ պարագայում հնարավորություն ենք ունենում փաստելու այս կամ այն իրավական երևույթի իրական բնույթը, զարգացման օբյեկտիվ գործընթացը, դերը հասարակական կյանքում, համապատասխան հարաբերությունների կարգավորման իրավական կառուցակարգը, արդյունավետությունը և այլն[1]:

Վերոգրյալն ըստ էության իրավական երևույթների իրական կեցության և իրավական իրականության տարանջատման վառ օրինակ է: Վերջինս իր հիմնավորումն է գտել նաև Վ.Մ. Սիրիխի աշխատանքում: Այս կապակցությամբ անհրաժեշտ ենք համարում ընդգծել «իրավական իրողություն» (реальность - the real life) և «իրավական իրականություն» (действительность - the reality) հասկացությունների բովանդակային տարբերությունը: Երբ խոսում ենք իրավական երևույթների իրական կամ օբյեկտիվ կեցության մասին, մենք գործ ունենք իրավական իրողության հետ, իսկ երբ իրավունքը կամ իրավական երևույթները կենսագործվում են՝ վերածվելով փորձնականի, մենք առնչվում ենք իրավական իրականության հետ:

Սիրիխը, արդարացի քննադատելով բոլոր այն հեղինակներին, ովքեր փորձում են նույնացնել վերոնշյալ հասկացությունների բովանդակությունը, գրում է. «…«իրավական իրողություն» հասկացությունը չի կարող հակասել իր իսկ հիմքը հանդիսացող «իրականություն» փիլիսոփայական կատեգորիային»: Հետևաբար, իրավական իրականություն է հանդիսանում և ոչ թե ցանկացած իրական կեցություն: Նույն կերպ, ըստ Հեգելի պատկերավոր արտահայտության. «Կեցության գոյության գռեհիկ իրականությունը», այլ միայն իրավական երևույթները և գործընթացները, որոնք ամբողջովին համապատասխանում են օրինաչափությանը և անհրաժեշտությանը»[2]:

«Իրավական իրողություն» և «իրավական իրականություն» հասկացությունների բովանդակության տարբերակման կողմնակից է նաև Ա.Վ. Պետրովը: Վերջինս, կիսելով Սիրիխի մոտեցումը, իրավական իրականությունը դիտարկում է որպես իրավական երևույթների և գործընթացների կեցության գոյության արտահայտման ձև (կեցության մեջ օրինաչափը և անհրաժեշտը)[3]: Թե՛ Սիրիխի և թե՛Պետրովի պատկերացմամբ՝ իրավական իրողությունը, ի տարբերություն իրավական իրականության, կարող է բովանդակել պատահականության և ոչ օրինաչափության տարրեր, որոնք անիրական են:

Համաձայնվելով բոլոր այն հեղինակների հետ, ովքեր բովանդակային առումով տարանջատում են «իրավական իրողություն» և «իրավական իրականություն» հասկացությունները, կարող ենք արձանագրել հետևյալը:

Նախ, իրավական իրողության մեջ գոյություն ունեցող ոչ բոլոր իրավական երևույթներն են ունակ կենսագործվելու իրավական իրականության մեջ: Երկրորդ, ուսումնասիրելով իրավական գրականությունը և հանդիպելով «իրավական իրականություն» հասկացության բազմաբնույթ բնորոշմների՝ մենք կարծում ենք, որ իրավական իրականությունը իրավունքի էության դրսևորման, իրավունքի օրինաչափությունների կենսագործման, ինչպես նաև հասարակության իրավագիտակցության արտացոլման ձև է: Այլ կերպ ասած՝ իրավական իրականությունը կազմում է իրավական համակարգի նյութականացված մասը:

Վերադառնալով «հնարավորություն» և «իրականություն» հասկացությունների փոխհարաբերությանն իրավունքում՝ նպատակահարմար է դարձյալ անդրադառնալ Դ.Ա. Կերիմովին: Վերջինիս մոտեցումը հետաքրքրական է մի քանի տեսանկյունից: Նախ, իրավական հնարավորությունը Կերիմովը համարում է բացառապես

---

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 277:

[2] Տե՛ս **Сырых В.М.**, Логические основания общей теории права. В 2 т. Т. 1. Элементный состав. М.: Юридический дом «Юстицинформ», 2000, էջ 528:

[3] Տե՛ս **Петров А.В.**, Правовая действительность// Право Нижегородский государственный университет им. Н.И. Лобачевского, 2015, № 4, էջ 154:

սոցիալական իրականության[1] ներուժ (потенция): Միաժամանակ, վերջինիս կարծիքով, իրավական հնարավորությունն անքակտելիորեն և օրգանապես կապված է սոցիալական իրականության հետ: Հնարավորությունը, լինելով սոցիալական իրականության արդյունք, բնութագրում է տվյալ իրականության վիճակը՝ հաշվի առնելով վերջինիս շարժն ու փոփոխությունները, և «միջանկյալ կապ» է առկա և ապագա իրականությունների միջև[2]: Այս կապը բացատրելու նպատակով Կերիմովը համեմատական զուգահեռներ է տանում «сущее» («գոյության») և «должное» (այն, ինչ պետք է լինի) դիալեկտիկական միասնության մեջ գտնվող հասկացությունների փոխհարաբերության հետ: Այստեղ Կերիմովի մոտեցման մյուս հետաքրքրական առումն է, որ գործ ունենք հավերժական շրջանի հետ, և ինչպես վերը նշված հասկացությունների փոխհարաբերության պարագայում է, սոցիալական իրականությունը ստեղծում է իրավական հնարավորություն, որը հասունանում և կենսագործվում է՝ վերածվելով իրականության, որն էլ իր հերթին ծնում է իրավական հնարավորություն:

Վերոնշյալում իրավական հնարավորության բովանդակությունը ձևավորվում է արտաքին գործոնների ազդեցության ներքո: Այդպիսի գործոններ են տվյալ պահին հասարակության մեջ գոյություն ունեցող օրինաչափությունները, զարգացումները, իրավագիտակցության աստիճանը, կամքը, պահանջմունքները և այլն: Հետևաբար, իրավունքի որակը և կենսագործման արդյունավետության աստիճանը կախված են սոցիալական իրականության մեջ տվյալ պահին առկա գործոնների արտացոլման ճշգրտությունից:

Այսպիսով, կատարված վերլուծության հիման վրա կարող ենք եզրակացնել հետևյալը.

1. «Հնարավորությունը» և «իրականությունը»՝ որպես դիալեկտիկական կատեգորիաներ, չեն կարող դիտարկվել միմյանցից անկախ: Դրանց էությունը և բովանդակությունը համալիր կարող են բացահայտվել միայն փոխհարաբերության մեջ, որտեղ իրականությունը հանդես է գալիս որպես ձև կամ տեսական մակարդակ, որին գալիս է լրացնելու հնարավորությունը որպես նյութ (մատերիա) կամ փորձնական մակարդակ: Այն պահից սկսած, երբ հնարավորությունն իր մարմնավորումն է ստանում փորձում, մենք գործ ենք ունենում իրականության հետ:

2. Իրավունքում «հնարավորություն» և «իրականություն» հասկացությունները քննարկելիս անհրաժեշտ է հստակեցնել այն իրավական երևույթների շրջանակը, որոնց նկատմամբ հասկացությունները դիտարկվում են: Օրինակ, սուբյեկտիվ իրավունքի պարագայում իրավունքն ինքնին հնարավորություն է, իսկ օբյեկտիվ իրավունքի տեսանկյունից իրավական հնարավորությունը կարելի է դիտարկել միայն որպես իրավունքի առաջացման նախապայման՝ տալով հասկացությանը փիլիսոփայական վերաիմաստավորվում:

3. Գոյաբանական տեսանկյունից ինքնին իրավունքը հնարավորության և իրականության միասնություն է, քանի որ արտացոլելով իրականությունը՝ վերջինս իր մեջ ամրագրում է նաև հնարավորը, այլ կերպ ասած՝ պարունակում է ինչպես «сущее» («գոյության»), այնպես էլ «должное» (այն, ինչ պետք է լինի) օրգանական տարրեր: Այս տեսանկյունից իրավունքը կարող ենք հասկանալ արիստոտելյան

---

[1] Դ.Ա. Կերիմովի համար սոցիալական իրականությունը, ինչպես Վ.Մ. Սիրիխի և Ա.Վ. Պետրովի իրավական իրողության դեպքում է, բովանդակում է թե՛ անհրաժեշտ և թե՛ պատահական, թե՛ օրինաչափ և թե՛ ոչ օրինաչափ տարրեր: Կերիմովի համոզմամբ՝ իրավունքի գործառույթներից է, արտահայտելով անհրաժեշտը և օրինաչափը, սահմանափակել պատահականի ազդեցությունը սոցիալական իրականության օրինաչափ զարգացման վրա:

[2] Տե՛ս **Керимов Д. А.**, Методология права (предмет, функции, проблемы философии права). 2-е изд. — М., Изд. Аванта+, 2001, էջ 278:

պատկերացմամբ[1]՝ իրականության մի դրվագ:

4. «Իրավական հնարավորություն» և «իրավական իրականություն» կատեգորիաների փոխհարաբերությունը կարելի է քննարկել տարբեր առումներով, բայց և այնպես անհրաժեշտ է հստակ տարբերակել գոյություն ունեցող իրավունքն իր կենսագործումից կամ իրավունքի օբյեկտիվ (իրական) կեցությունը իրավական իրականությունից: Առաջինի դեպքում մենք գործ ունենք իրավական իրողության հետ, իսկ երբ իրավունքը կամ իրավական երևույթներն արդյունավետորեն կենսագործվում են՝ վերածվելով փորձնականի, մենք առնչվում ենք իրավական իրականության հետ: Վերջինս իրավական իրողության նյութականացված մաս է:

5. Իրավունքի համատեքստում «հնարավորություն» և «իրականություն» կատեգորիաների փոխհարաբերության շրջանակներում չի կարելի անտեսել իրավունքի սոցիալական բնույթը, քանի որ լինելով հասարակական հարաբերությունները կարգավորող նորմերի ամբողջություն, իրավունքը, նախ, արտացոլում է հասարակական կյանքի պահանջմունքները: Հետևաբար, արդարացված է նաև այն մոտեցումը, համաձայն որի՝ իրավական հնարավորությունը ստեղծում է սոցիալական իրականությունը և կենսագործում է վերջինում՝ վերածվելով իրականության:

СООТНОШЕНИЕ ВОЗМОЖНОСТИ, КАК ТЕОРЕТИЧЕСКОГО, И ДЕЙСТВИТЕЛЬНОСТИ, КАК ПРАКТИЧЕСКОГО, В ПРАВЕ

Асмик Лейлоян
Аспирант кафедры теории и истории государства и права ЕГУ, Специалист по управлению контрактами по размещению сайтов в ЗАО «МТС Армения»

Анализ соотношения категорий «возможность» и «действительность» в праве дает возможность проникнуть в суть права, наблюдать право в движении, выявить закономерности развития правовых явлений и реалий и, таким образом, предвидеть способы внедрения соответствующих механизмов правового регулирования и повышения эффективности реализации права. В статье автор находит, что сущность содержания действительности и возможности может быть глубоко раскрыта, только в их соотношении, где действительность выступает, как форма или теоретический уровень, а возможность, как материальный или практический уровень. Соотношение правовой возможности и правовой действительности автор рассматривает в разных аспектах права, а также придает особое значение проблеме дифференциации содержания понятий «правовая реальность» и «правовая действительность».

Согласно представленному в статье заключению, правовая действительность - это материализованная часть правовой системы, но не все правовые явления, существующие в правовой реальности, могут быть реализованы в правовой действительность и, следовательно, теоретическое осмысление проблемы соотношения действительности и возможности в праве, несомненно, имеет практическое значение для повышения эффективности реализации права в обществе.

[1] Տե՛ս **Книгин А.Н.**, Учение о категориях. Томск: Изд-во Том. унт-та, 2002, էջ 124:

CORRELATION OF POSSIBILITY AS A THEORETICAL AND REALITY AS A PRACTICAL IN LAW

Hasmik Leyloyan
Post-Graduate Student of the YSU Chair of Theory and History of State and Law, Site implementation contracts management specialist at "MTS Armenia" CJSC

Analysis of the correlation between the categories "possibility" and "reality" makes it possible to penetrate into the essence of law, observe law in motion, identify patterns in the development of legal phenomena and realities, thus, foresee ways to introduce relevant legal regulatory mechanisms and improve the effectiveness of the implementation of law. In the article the author finds that the essence of the content of reality and possibility can be deeply disclosed, only in their relationship, where reality appears as a form or theoretical level, and possibility, as a material or practical level. The correlation between legal possibility and legal reality, the author is considered in various aspects of law, and gives special importance to the problem of differentiation between the concept of "legal reality" and "the real life in law".

According to the conclusion presented in the article, legal reality is a materialized part of the legal system, but not all legal phenomena existing in the real life in law can be realized in legal reality and, so theoretical understanding of the problem of the correlation between reality and possibility in law, undoubtedly, has practical significance for increasing efficiency implementation of law in society.

Բանալի բառեր – *իրավունք, իրավական հնարավորություն, իրավական իրականություն, հնարավորություն, իրականություն, դիալեկտիկական կատեգորիաներ, տեսական, փորձնական, իրավական իրողություն, սոցիալական իրականություն, իրավունքի փիլիսոփայություն*
Ключевые слова: *право, правовая возможность, правовая действительность, возможность, действительность, диалектические категории, теоретическое, практическое, правовая реальность, социальная действительность, философия права*
Key words: *law, legal possibility, legal reality, possibility, reality, dialectical categories, theoretical, practical, the real life in law, social reality, philosophy of law.*